 Զոր ոչ է անկ աչաց դիտել :  
 Նազեալ ճեմի նա ընդ ալիս  
 Որպէս ծաղիկ ինչ ձիւնափայլ  
 Զոր ծածանէ ջուր հանդարտիկ .  
 Ըղպաղպաջուն մրդէ գոնդողս  
 Մարմնով չափ ջուրցն 'ի վեր կալով :  
 Կապուտաներկ հեռոցն 'ի մէջ  
 Որպէս շուշան 'ի մանիշակս՝  
 Փայլէ խաղաղ 'ի ծովս Աստղիկ :

Արժաթափայլ երամ գլխնաց  
Բարձեալ տանին զիղձ եւ զՅէր  
Որ ըզմարդկան ծաղրեն նուրբ խելս ,  
Եւ հոյ ճրկանց որ սահ 'ի սահ  
Կայտուն յալիս , զՊատիեան զըշխոյ  
Գրդեն զգուեն ամենուրեք  
Ուր զեղածիս գայնա 'ի լիւղ :



Ծ.

ԱՅԳԵԿՈՒԹՅՈՒՆ (1)

Ըզսեաւ ողկոյդս 'ի կողովս  
Բարձեալ կուսից եւ պատանեաց ,  
Ի հնձանս անդր ընկենուն ,  
Այլ լոկ արանց է ճմլել ,  
Եւ ըզգինի ազատելով  
Զլեզուն 'ի շռինչրս լուծանեն  
Յօրհնութիւն դից այգեստանեաց :  
Ընդ փրփրայոյզն 'ի տաշտս իւրում  
Նորըն Բաքոս՝ (2) յակճիւրս կան .  
Այն ինչ արբեալ զայդ ծերունւոյ՝  
Գողգոջ ոտամբ կայթս հարկանէ  
Զալեւոր գլուխ տատանելով ,  
Այլ սիրասուն հնձանահար  
Լըպիրժ ոտամբ սարդեալ զայ  
Առ կոյս՝ որ խոնջ 'ի քուն մըտեալ  
Ընդ հովանեաւ տերեւանւոյն  
Ընկողմանի փափուկ մարմնով ,  
Տարածամու՝ դնա քնքշանօք  
Գոյ շիմենեայ մատնիչ գրդէ .  
Այլ ոչ բանիւքն համողեալ՝

Զոր զլանայր պարկեշտութիւն  
Բուռն կորզէն: — Զի Նիոնիս  
Ազատ խայտայ "նդ մանկաւոյն  
Որ ընդ գինիս անկանին :

ԾԱ.

Ի վ. Ա. Բ. Գ. (1)

Երգեմ ըզվարդ նոր ընդ ծիծաղ դարնայնոյն,  
 Վարդ դից է շունչ, վարդ մահացուաց ցնծութիւն,  
 Եւ 'ի Սիրոյ ծաղկափրթիթն եղանակ՝  
 Զարդ Շրնորհաց եւ Աստղկան է մանեակ:  
 Ըղնա Մուսայք եւ հոյլք սիրեն Նիմփայից,  
 Քաղցր է գրգել ըզվարդ յուղին փրչալից,  
 Սիրոյ դժաղիկն այն քաղցր առնուլ ժողովել  
 Եւ փափկագեղ ըղնա ձեռօք ամփոփել<sup>(2)</sup>:  
 Քանի հաճոյ է քերթողաց ծաղիկն այն  
 Ի տօնս, 'ի պարս եւ Բաքոսին 'ի սեղան.  
 Եւ զլինչ անոյշ առանց վարդի լինիցի,  
 Այգ վարդամատն է եւ Նիմփայք վարդածղի,  
 ԶԱստղիկ ասեն քերթողք լինել վարդերանդ.  
 Վարդ հիւանդաց պաշտէ<sup>(3)</sup>, օժէ զգերեզմանս  
 Ամաց յաղթէ՝ եւ նորին հեշտ ձերութիւն  
 Ըղմանկութեան իւրոյ պահէ հեշտ բուրումն:  
 Օ'ն արդ ապուք ողել զըսկիզբն նորին՝  
 Որպէս պատմեալ մեղ աւանդեն վէպք նախկին:  
 Յորժամ յալուց ծիրանածայր ու ծիծաղ  
 Ի վեր ցոլաց Աստղիկ նամէտ եւ չքնաղ<sup>(4)</sup>,

Եւ յըղեղէն 'ի դուրս եհան Սրամազդ՝  
Ըզգոռ Պալլաս՝<sup>(5)</sup> դից Ուլիմպեայ անեսաստ,  
Ի նոր կանթէ բուսոյց անդէն եւ երկիր  
Ըզլարդ<sup>(6)</sup>, ծաղիկ սիրուն, ծընունդ հրաշալիր.  
Դիցն անմահից ակումբ յառնել վարդ ըզնոյն՝  
Սուղ մի ցօղեաց 'ի նա նեկտար դեղամոյն,  
Եւ 'ի փրշոց նորին փթթեաց յերկին կոյս՝  
Նըւիրականն Բաքոսի անմահ բոյս<sup>(7)</sup>։



ԾԲ.

Ծ Ե Ր Ո Ւ Ն Ի

Խու՛ր պատանեաց կրք տեսանեմ՝  
Պատանենամ եւ ես անդէն,  
Յայնժամ, թէ եւ յեց յալեւոյթ  
Թեւս ըղգենունս ոտք շուտափոյթ :  
Կանց այդր, բեր ծաղկունս, Կիւպէլ<sup>(1)</sup>  
Ձի ցանկացայ ես պրսակել .  
Օ՛հ փախերուք, ալիք ճերմակ՝  
Ձի արդ պարեմ ես պատանեակ .  
Ըզբաքոսի բեր ինձ նեկտար  
Ձի զծերունեաց ցուցից քեզ կար,  
Ո՛րչափ գիտենս ըմպել ճառել,  
Եւ ՚ի կղկղաթ յաւիւնս վառել :

ԾԳ.

ՆՇԱՆ ՍԻՐԱՀԱՐԱՅ

—

Նիշ 'ի գաւաղ

Նըժուղաց' (1)

Գընեն խարան

Հըրայրեաց :

Եւ ըղՊահլաւն

Սապաղէն

Ի խոյր գլխոյն

Հանաչեն :

Իսկ թէ ես դոք

Սիրահար

Տեսից' գիտեմ

Հեշտարար :

Զի կայ դրօշակալ

Ի գիւղի

Ներքին պատկեր

Իւր սրտի :

ՎԵՐՁ



ՏԱՂԲ

ՀԱՄԱՐԵԱԼԻ ԱՆԱԿՐԷՈՆԻ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՍԿԱՐԻ



Ա.

Ի Ք Ն Ա Ր Ն <sup>(1)</sup>



Տուք ինձ ըզքնարն Հոմերոնի  
Այլ խըղեղէք դարեան լար,  
Զօրէնս 'ի մէջ առէք տօնի՝  
Զբաժակն ինձ տուք հեշտարար,  
Մըտեալ եւ իմ քաղցր 'ի դինի՝  
Եւ խնդութեամբ կայթս հարեալ,  
Յուցից հողիս դիմորդ վառի  
Ի բոց սիրոյ մեղմափայլ:  
Տուք ինձ ըզքնարն Հոմերոնի  
Ի բաց խըղեալ դարեան լար,  
Ի դիներբուս եւ 'ի տօնի  
Զուարթ երգեսցուք անդադար:



Բ.

ԱՌ ՃԱՐՏԱՐ ՌՔ

Մուսայից լուր ըզլին  
Ո՛ ճարտարդ 'ի վրձին :  
Եւ ապեա դու ինձ նախ  
Նըկարել վայրս ուրախ ,  
Սրս անդուլ 'ի խնջոյս  
Եւ յանուշ գիներբուս ,  
Սպա խուճբ վարդագեղ  
Բաքուհեաց <sup>(1)</sup> դաշտադեղ ,  
Որ ընդ բլուրս աստանդին  
Չայն բարձեալ մուկդին :  
Հուսկ ուրեմն ինձ գրծեա՛  
Թէ դժելոյ հնար կայ՝  
Չերկնաստիպ սէր երկրիս  
Չոր ըզգայ մարդ յասիս :

Գ.

Յ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն

—

Գնացին յինէն փափկիկ վայելք մանկութեան,  
 Վարսք ըսպիտակ ծածկեն ըզգլուխս իմ ողջոյն,  
 Հեշտք եւ շքնորհք գեղամոյն  
 Եւ ամենայն ծաղկունք տխոյ խամբուցան :

Գառն յիշատակս դրոշմեն տարիք 'ի դէմս իմ,  
 Ըզգեղ նոցին երարձ անդութն ամանակ,  
 Մընան ինձ կեանք տխրորակ . . .

Ոյք վասն անդուլ նստեալ հեծեմս եւ հիւժիմ :

Զարհուրազին է յիշատակքն մահու .

Սեաւ եւ անեղ է ճանապարհ որ տանի .

Աւ Պլուտոնեան թուխ գահու .

Եւ եթէ գամ մի երթիցես գայն ուղի՝

Ո՛հ վերադարձ չիք անտի :

Գ.

Թ Գ Ի Ն Ի

—

Ըղխոր բաժակդ այդ բարեկամ,  
 Լից ինձ գինեաւ թաթաղուն,  
 Սյւ ըղգինիդ այդ քաղցրահամ  
 Խառնեա ինձ ջուրը պաղպաղուն

Ձի բոց դոր տայ Բարսա՛ այսու  
 Թէ ոչ շիջցի մեղմանայն,  
 Էլւանք, արդ ճն առ բեր ինձ դու  
 Ըղգեղեցիկ բաժակն այն :


Արբցուք գինի լուս անչըչունջ,  
 Թողցուք ըզկազս Նսկիւթեանց  
 Եւ ցըյեաին կենաց մեր շունչ՝  
 Մի լքցուք յայս բարութեանց :

Ե.

ՍԵՐ ԹՄԳՈՒՅԵԱԼ Ի ՎԱՐԴԻ

—

Մինչ 'ի դարաստ փողփողենէջ քաղէի՝  
 Այդածին փունջ մի ծաղկի՝  
 Վարդից 'ի հոյս 'ի քուն տեսի սէ ըղՍէք  
 Ար շուրջ բուրմունս ծաւալէր :  
 Կալայ գմանկիկն եւ 'ի բաժակ մըխեցի  
 Աւ զղեղատու հոյզն արբի .  
 Սրդ կուտիղեայ յօրինեցաւ բոյն հողիս,  
 Լրսեմ. բըբէ 'ի սրախ :



2.

Յ Ո Ս Կ Ի <sup>(1)</sup>

Մինչ ոսկին խուսափէ յիմ ձեռաց  
Քան ըզսիւզ ամարան ճեպրնիթաց,  
Քան զաղջկան սիրատարի հայեցուած,  
Կարծիցէք թէ սնդիմ զհետ նորին .  
Ո՞ր պանդոյր խնդրիցէ զթշնամին  
Եւ զմընալ սիրիցէ ոտխին :  
Ընդ ոսկւոյ հեռանան սեաւ խորհուրդք,  
Հանդարտին երաշխէպք մրկածուվք  
Մաղկածին ծաւալեալ հեղիկ սիւզ :  
Մասն 'ի թինդ տանելով քընարիս  
Գեղգեղեմ միշտ զանոյշ սիրելիս ,  
Եւ թնդմանց'ն արձագանք տայ հոգիս :  
Այլ անդրէն տեսանեմ ես զոսկին ,  
Որ գրգէ եւ գգու է կաթողին՝  
Ըզհրաշէկ'ն ինձ ցուցեալ ըզգինին . . . :  
Ի՞բր ոսկւոյդ այդ 'ի սէր արհամարհ  
Ուրացայց ես ըզքեզ , ն՛ն քընար՝  
Եւ ըզքեզ , Սէր . թողից մինչ 'ի սպառ :  
Ա՛յ մետաղ նենգաւոր եւ վատթար ,  
Զուր ճգնիս արհեստիւ քով մուլար

Ի չարեաց զիս թիւրել ճանապարհ :  
Ըղբանդոան՝ քան ըղքոյդ սիրեմ ձայնս ,  
Ըզսիրոյ՝ քան թէ դքոյդ քնքրչանս .  
Ըզխաղաղ՝ քան ըղպերճ եւ ճոխ կեանս :  
Գնւ յարհեստ խաբեքայ եւ ջատուկ  
ԶԱստղորդին արարելի յեղյեղուկ՝  
Եւ ըղքնարն ոսկեղին եւ ըսարուկ :  
Գնւ զխնջոյս խռովեցելի գրւարթուն ,  
Պղծեցելի ըղհամբոյր սիրասուն  
Որ կապէր ըղհողի ընդ հողւոյն .  
Յեաս աղէ , երթ անսխոյթ եմ ըղքէն .  
Ե՛րթ Թրակիոյ դու յաղինս անօրէն՝  
Նուաղդ 'ի լոյս խառնակել զհամօրէն :  
Զքւր յուսաս ըղքընարս իմ կօրղել ,  
Զքւր յուսաս գգուանօք քովք ընտել  
Ի սեմօցս ըղՄուսայս վրտարել :  
Տար այլուր ըղմողիչ հրաչրս քո  
Որ պատրողք են խուժան օրերոյ ,  
Աւխտադրուժ բնաւորդ ոգւոյ :  
Կեանս առանց քո վարեմ ցնծակից .  
Եւ ոչ այլ պաղատիմ ինչ 'ի դից՝  
Բայց ըղքնար եւ զանոյշ սէր կուսից :

Է.

ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ

Քանի ախորժ է՝ ճեմ առնուլ

Գալարազեղ 'ի մարմանդ ,

Մինչ հողմ մեղմիկ ծաղկանց ըղհուլ


Գլուխալ չարժէ աստ եւ անդ :

Քանի ախորժ դիտել դաշին

Հիւսեալ սաղարթ ընդ սաղարթ ,

Ու՛նդ հոխանեալ բաղմեալ նորին

Մնչել 'ի սէր ըղձակաթ :





Ը.

Ի ՍԷՐ

—

Որ ևս անօրէն անկեղեցաց

Ամենակալ Սէր,

Քնդ ուն խայտան միշտ ՚ի շերինս

Հարսուք լուսաճեր :

Գղաշխական Աստուած հրդօր,

Լուր ըզք ծառայ,

Պաղատանայն ունկրն մատա՛

Մի զլանար նմա :

Գլխալուրէայ աղղկն հայցեմ

Գրթութիւն վասն իմ .

Գիտեմ զի չէ քեզ անհաճոյ

Բոց յոր խարուկիմ :

—>>>00<<<<—

Թ.


ՅԱՆԱԿՐԷՈՆ (1)

—

Ըզդինեաէր տեսի գքերթողն յերազիս  
Յոյր յիշատակ պանծայ Տէոս .  
Ըզկաթողին գարձոյց նա գաշս իւր առ իւ՞  
Եւ բարբառէր սիրախօս .  
Ճեպեմ փութամ, գիրկս ըզնովաւ արկանեմ,  
Գրօշմեմ հայբոյրրս ջերմադին ,  
Շրթունք ըզհոտ բուրեն գինւոյ սիրաճեմ՝  
Սլեծադիկ գէ՛ծք ժպաին .  
Վերամբառնայ զնա պատանւոյ 'ի տիպ' Սէր՝  
Ու'աջով վարէր սիրասընոյց ,  
Ըզփուշ զըլխոյն՝ ո'գքերթողին հոտ սիրէր՝  
Ծիծաղաշուրթն ինձ մատոյց :  
Զխորհրդաւորն առի պըսակ 'ի նմանէ՝  
Հիւսեցի շուրջ ըզզլխով .  
Եւ անտի այսր 'ի սիրտս անգուլ ըրնակէ՝  
Սէր՝ սիրասոյլ 'ի ժողով :

ՎԵՐՉ

ԾԱՆՅՈՒԹՈՒԹԻՒՆՔ



ՏԱՂ Ա. <sup>(1)</sup> Տաղս այս 'ի Ատաթիկանեան ճեռագրին 23<sup>րդ</sup> դասեալ է՝ այլ առաւել 'ի ճահ թուի կալ 'ի սկզբան, յառաջարան իմն այլոցն : — Մակդիրք աարդիցն ըստ զանազան տպաց զանազանին, զի ոչ Քերթողին՝ այլ թարգմանչաց :

<sup>(2)</sup> Ատրիտք՝ կղբարք՝ զօրագլուխք Ելիոնական պատերազմին՝ Աադմոս՝ առաջին թաղաւոր Թէբէի, ըստ առասպելաց որդի Ադենուրայ արքային Տիւրոսի եւ Սիդոնի . առաքեալ սորա 'ի խնդիր քեռն իւրոց առեւանդելոյ՝ տիրեաց՝ ուր եւ չողաւ . ուսոց Բէտլտացւոց զաթութայս, զորս էր նորա 'ի հայրենիան եւսեալ : Սատակեաց զվիշապն որոյ սպանեալ էր զընկերս նորա՝ յորոց մնացեալ հնգիւք կառոյց ըզ Թէբէ : Զմեծագոր զիւցազինս կամի երդել Սնակրէտն, այլ Սէր ոչ հաւանի :

<sup>(3)</sup> Յորժամ կամին նախնիք ասել թէ նոր ինչ ասնուին երդել՝ ասին թէ փոխեցին զաղիս քնարին :

(<sup>1</sup>) Այս էն երկք Հերքիւլեայ՝ զոր ետ նմա Եւրի-  
թէոս արքայ նախանձաւոր փառաց նորա : — Ա.  
Սպան դառիւծ ամենի 'ի Նեմեան անտառի, զորոյ  
զմորթ հանապաղ զթիկամբ արկանէր : — Բ. Սա-  
տակեաց դրաղձաղլուխն Հիդրայ՝ որոյ ընդ հատա-  
նելն եւ բուսանէին գլուխք : — Գ. Սրընթաց ար-  
շաւանօք ըմբռնեաց եղն մի ոսկեղջիւր եւ պղըն-  
ձոսն : — Դ. Որսաց յԱրկաղեայ գկինձն մուկգին  
որ ապականէր զերկիր : — Ե. Սպան զՊուսիրիա ար-  
քայ Եգիպտոսի՝ որ զհիւրան յաշտ առնէր : — Զ. Սա-  
տակեաց զՆիոմիդեա արքայ Թրակացւոյ, եւ արկ  
զգէչն առաջի երխարաց որպէս սովոր էր նա ինքն  
առնել իւրոյ ասպնջականացն : — Է. Սանձեաց ըզ-  
ցուչն որ կարթակոտոր արար զԿրեալ : — Ը. Կոր-  
դեաց զեղջիւր դեռի միոյ՝ զոր եւ յետս դարձոյց 'ի  
յափշտակել զեղջիւրն Ամալթոյ : — Թ. Հեղձամրդ-  
ձուկ ջնջեաց զերկրածինն Անթէոս հակայ անձոռնի :  
— Ժ. Նետահար սատակեաց զմիջատս լճին Սախմ-  
փալիոյ : — ԺԱ. Գողացաւ զոսկի իոնձորս դրախ-  
տին Հեապերիդեայ, սատակեալ նախ զվիշտապն պա-  
հապան դրանն : — ԺԲ. Ամբարձ ուսովք զերկինս 'ի  
թեթեւութիւն Ատլանտեայ :

(<sup>2</sup>) Ի գողար եւ շնորհալի տաղիս յայմիկ Անակ-  
րէոն ինքն թուի խօսել, ձայնք քնարի նորա գը-  
որնչեն յունկն մեր, թուի իմն տեսանել զքերթողն :  
Քանի արձակ, քանի պարզ եւ սակայն քանի ճօխ է

'ի բացատրութիւնս . մէն մի բառ՝ պատկեր իմն է .  
եւ այդ խակ 'ի յուսահատութիւնս կրթէ . զթարգմա-  
նիչն :

SU. 2. 6. <sup>(1)</sup> Ձիք զաղան որոյ որկոր մեծ իցէ իբ-  
րեւ զանխւծուն :

<sup>(2)</sup> Ոգի զօրութեան՝ զՅոյն Յրօնիսի՝ ոմանք խո-  
հեմութիւն իմանան : Այլ ոչ թուի այդ ճշգրիտ՝ զի  
եւ առ կանայս զտանի խոհեմութիւն : Երկրորդ ըզ-  
նիւթական զինուոց կամ պաշտպանութենէ . խօսի-  
քերթողն՝ որով առաւել պատշաճ է յիշատակել ըզ-  
բնական զօրութիւն մարդկան :

SU. 2. 9. <sup>(1)</sup> Կարի զուլեալ է առ բանասէրս եղա-  
նակ որով քերթողն բացատրէ զկէս զիշերոյ . եւ  
երեւոյթդ այդ արդարեւ նշմարի յայնմ ժամու :

<sup>(2)</sup> Ոչ թէ կանթեղս 'ի կիր առնուին Յոյնք՝ այլ  
ջահս փայտեայս՝ զոր 'ի վերայ աշտանակաց դնէին :

<sup>(3)</sup> Յայտ է զի նկարէին զՍէր՝ մանուկ թեւաւոր .  
աղեղն 'ի յուս :

<sup>(4)</sup> Սիրտ , լեզի , աղիք , որպէս երեւի յամենայն  
քերթողաց նախնեաց , տեղի բնակութեան հեշտու-  
թեան համարէին :

<sup>(5)</sup> Գորեղն՝ ազդ ինչ խոշոր ճանճի . թէպէտ թարգ-  
մանիչք ոմանք 'ի բաց թողին զբառդ՝ իբրեւ ոչ  
փայելուչ արդի ճաշակաց՝ այլ ես ընդ բաղմաց հա-  
ւատարիմ սիրեցի մնալ :

SU. 2. 7. <sup>(1)</sup> Մտրտ նուիրական էր Բաքոսի՝ որ

պատրեալ երբեմն 'ի տեսոյն հանդեաւ ընդ հովանեաւ հորա՝ այդի համարելով զայն . — Արեւին ըզ ծառս նախնիք եւ վասն հոտոյն :

(<sup>2</sup>) Աչ կամի ասել քերթողս թէ զայցէ պաշտել զնա աստուածն Սէր . այլ զմանուկ ծառայ՝ վառեալ խանդիւն Սէր յորջորջէ : Սովորութիւն էր առ Յոյնս , որպէս այժմ առ Սալանիացիս , զի մանկունք վեշտասան ամաց եւ 'ի խոնարհ եւ մատաղ օրիորդք պաշտէին 'ի խնջոյս : Եւ Սնակրեոն անշուշտ ոչ անտես առնէր զսովորութիւնդ :

(<sup>3</sup>) Քոյսս այս անտերմն եւ անպատու յայնքան յաճախատունկ էր յափունս հիւլոսի , զի մայրեաց նրմանեցուցանէ զայն կասիողոր . « Անդ , ասէ , ամբառնայ անտառն անաղարթ , հունձքն՝ ջրաբոյս , զարդ ճահճաց : Ծառս այս մեղմազոյն քան զթուփս եւ պնդազոյն էր քան զսովորական արմախս : Եր 'ի նմա հիւթ սպիտակ՝ ոչինչ անհամ քմաց . արտաքինն նորա պնդազոյն էր » : Աչ առանց պատճառի կոչէ զայն կասիողոր հունձք ջուրոյ , զի կարի պիտանի էր Եգիպտացւոց , այնու յերիւրէին մուճակս , կանթեղս , առադաստս . աղքատք յօրինէին հանդերձս : — Ծառայէր եւ իբրեւ ժապաւէն , որպէս երեւի 'ի բանից քերթողիս . եւս եւ 'ի մազաղաթ :

(<sup>4</sup>) Սովորութիւն էր իւզս անուշունս զեղուլ ոչ միայն 'ի վերայ մեռելոց՝ այլ եւ զերեղմանաց նոցին .

(<sup>5</sup>) Յուն . « Մինչչեւ երթեալ 'ի պար մեռելոց » .

Հեթանոսք համարէին կայթա հարկանել ողւոյ յե-  
լիւսեան դաշտի :

ՏԱՂ Ե. <sup>(1)</sup> Առ նախնեօք կարի յարդի էր վարդ.  
չատ է ընթեռնուլ վասն Յունաց զՍնակրէնս, եւ  
զՌատիոս վասն Հռով ճայեցւոց : — Սղո թիւն կե-  
նացն՝ հասարակ նմա ընդ ամենայն գեղեցիկ իրաց՝  
առաւելու զյարդ նորա :

<sup>(2)</sup> Սքանչելի եղանակաւ քերթողն զգարուն նը-  
կարագրէ՝ զՍատղիկ, զՍէր եւ զՇնորհս՝ ի պար ե-  
ղեալ ընդ Նիմփայս : Պար մտանէր եւ ի պաշտօնս  
դից առ Յոյնս :

ՏԱՂ Զ. <sup>(1)</sup> Վասն յաճախ յիշատակեալ սուրբու-  
թեան պսակաց ի մէջ բերցուք զբանս Սափիսովայ.  
«Որքան պսակիմք՝ այնքան հաճոյ եմք դից որոց  
յաշտ առնեմք, դարձուցանեն զերեսս իւրեանց  
յայնցանէ որ անպսակք իցեն», յիշատակի եւս առ  
նախնեօք թէ ի մեղմել դտապ զինուոյ՝ պսակէին  
ծաղկօք ինչ, որք յետոյ ի վարդ փոխեցան :

<sup>(2)</sup> Բառն յոյն Բիքդիս՝ պատճառս ետ վիճից առ  
գիտնականս : Բանդեռն Հայոց՝ կարի ի ճան թուի :  
Բառդ Lyra հիւսիսական է՝ նշանակէ Շնորհք, գեղ,  
հրապոյրք . Chitarra, բառ Փիւնիկ, նշանակէ  
ճայն աղմկայոյդ, շոինդն :

<sup>(3)</sup> Դիք յիշատակեալք աստ են ի բացայայտել  
զխնդութիւն : Սատղիկ կամ Ախ թէրի (վասն Ախ-  
թերեայ քաղաքին ուր տաճար կանգնեալ էր նմա)

Կամ Ափրոդիտ, մայր Կուպիդեայ այն է Սիրոյ եւ  
 ամենայն վաւաչոտու թեանց : Իսկ Բաքոս կամ Աիէ-  
 ոս (բառ յոյն որ է արձակել լուծել 'ի կապանաց)  
 եղևալ է Բաքոսի, իրրեւ այն զի ազատէ զմիտս .  
 Կոչի եւ Ռիոնիս, որ է Ռիոս այն է Արամազդ . Նիսի  
 խթել, կոչի եւ Սարանդ արամէտ եւ է սա աստուած  
 զինւոյ : Յանուն սորա էին Բաքոսականքն անուան-  
 եալ հանդէսք : — Սովորու թիւն էր Յունաց զինի  
 ծաղու զիմակս զգեհու լ եւ մատաղ գուսանօք պա-  
 րել երգել : Զմին 'ի խնջոյից աստի նկարագրէ Ա-  
 նակրէոն :

ՏԱՂ Ը. <sup>(1)</sup> Թուի թէ եւ յերազս անդամ հեշտա-  
 սէր էր Անակրէոն :

<sup>(2)</sup> Այսինքն կամէի ննջել վերոտին զի տեսից ըզ  
 հոյն երազ :

ՏԱՂ Թ. <sup>(1)</sup> Անուանի տաղս այս՝ իրաւամբ վկա-  
 յեցաւ 'ի բանասիրաց ընդ կատարելագոյն երկա-  
 նախնեաց :

<sup>(2)</sup> Սովորու թիւն էր նախնեաց օծանել զթռչունս  
 որպէս երեւի 'ի առդիցդ . թռչունս այս հրեշտակ  
 էր Անակրէոնի 'ի ձեռն որոյ առաքէր նամակս առ  
 սիրելիս իւր : Սովորու թիւնս այս յիշատակեալ առ  
 Պլինիոսի, Նլիանու եւ այլն գտանի եւ առ արեւել-  
 եայս 'ի հնազոյն ժամանակաց հետէ . թողուն զէզա  
 աղաւնեկաց 'ի քաղաքն ուր կամէին զնամակն յղել  
 եւ նամակաւ հանդերձ արձակելին զարուն . ընաղ-



դու մն սիրոյ թռչնոյն վարէր զնա առ ընկերն իւր :

(<sup>1</sup>) Բաթիւն անուն միոյ սւրուք 'ի մանկանց զոր սիրէր Սնակրէոն :

(<sup>2</sup>) Հրաշալի է փափկութիւն խմաստիս : Քանի զողոր եւ սիրուն էին տաղք նորա՝ զի վասն միոյն եւ եթ Սասղիկ մայրն Շնորհաց եւ Գեղոյ՝ ձօնէ աղաւնեակ մի :

(<sup>3</sup>) Տես վերագոյն 'ի Զ :

(<sup>4</sup>) Զագռաւ ասէին նախնիք թռչուն շաղիաղութան զամենեւեան :

**ՏԱՂ ԺԲ.** (<sup>1</sup>) Էր սա արքայ Թրակիոյ, ած 'ի կընտրութիւն զՊրոկնէ զզուսար Պանդիոնի, յորմէ ծընաւ նմա Իդիս անուն որդի : Յետ սակաւուց բըռնադատեալ նորա զՓիլոմէլ՝ քոյր Պրոկնէի, եհաա զլեզու նորա, զի մի կարասցէ յայտնել զեղեոն, եւ փակեաց յաշտարակ : Այլ հնարիւք յայտնեալ Փիլոմելայ՝ քուն իւրում որ ինչ եղեալ էր՝ երկօքին 'ի միասին 'ի վրէժ քինու ետուն նմա 'ի կերակուր զմարմին որդւոյն, եւ ապա յայտնեցին ըզդաւն : — Տէրէոս ցասուցեալ եւ 'ի յուսահատութիւն կրթեալ՝ փոխեցաւ 'ի յոպոպ որ միշտ որսաց զսխակ եւ զծիծեան յոր Փիլոմէլ եւ Պրոկնէ էին լեալ կերպարանափոխ :

(<sup>2</sup>) Զիք թռչուն վաղայարոյց քան զծիծառն :

**ՏԱՂ ԺԳ.** (<sup>1</sup>) Գիողորոս Սիկիլիացի պատմէ եթէ Կիւպելէ զուսար Մէոնիոյ, արքային Փալեդիոյ,

հարեալ 'ի սէր Ատաբախի, յղացաւ 'ի նմանէ : Եւ դառնալ աղջկանս առ հայրն ցատուցեալ սորա ընդ դործն՝ սպանն զնա . ընդ որ յանյոյսս կրթեալ Ատաբախի՝ ընթանայր ընդ լերինս եւ ընդ բլուրս կարդալով զՆիւպելէ յանուանէ :

(<sup>2</sup>) Կարա՛ ակն ջրոյ յանձաւ իմն՝ նուիրական Ապուլլոնի, զեռեղեալ 'ի միջի Առլուփոնի եւ Լիպերեայ՝ 'ի Յոնիա : Անդ էր պատգամատուն ինչ զիցս այսորիկ . որ ըմպէր 'ի ջուրց անա՛յ ընոյր մարդարէական ոգւով :

ՏԱՂ ԺԴ. (<sup>1</sup>) Քերթողն 'ի գեղեցկահիւս տաղիս յայսմիկ խօսի արդարեւ վառեալ խանդիւ . սպառեալ նեախն՝ Սէր ինքնին յարձակի 'ի սիրտ նորա, որում ոչ եւս ժուժկալեալ՝ տեղի տայ : Արժանապէս դասեալ է տաղս ընդ գեղեցկագունից :

ՏԱՂ ԺԵ. (<sup>1</sup>) Թէքէիւ՝ իմանայ քերթողն զպատերազմ եօթն եղբարց . — Փոխողիայ՝ այն ինքն է Իլիոն :

ՏԱՂ ԺԶ. (<sup>1</sup>) Սարդիկէ մայրաքաղաք Լիւդիոյ , անուանի յոյժ վասն գանձուցն յաճախութեան եւ յառածս եղեւ . Կիկէս թագաւոր էր նորա . զամանէ վիպեն թշուառագոյն զարձեալ յԱպուլլոնէ քան զաղքատագոյնս :

(<sup>2</sup>) Բռնաւոր նշանակէր առ Յոյնս այր՝ որ զաղատաէրութիւն զրոամբ ամէր , թէպէտեւ վարէր զիշխանութիւնն արդարակորով եւ իմաստուն օրինօք :

ՏԱՂ. ԺԵ. <sup>(1)</sup> Զտաղս այս որ գտանի եւ առ Սւլոս  
Գելլիոս՝ լուեալ ասէ նա՝ ՚ի խնջոյս ուրեք :

<sup>(2)</sup> Մի զէնս եւ զրահս : — յԵլիականին Հեփեսոս  
տոս ձուլէ զէնս Սքիլլեայ, այդմ ակնարկէ թերեւ  
եւս եւ տողս :

<sup>(3)</sup> Անգնդայոյդ կոչէ Հոմեր զՀայկն . Անակրէոն՝  
ախոր :

<sup>(4)</sup> Մենատ կամ Բաքուհիք, քրմանոյչք ընկերաւ  
կից զիցն Բաքուսի, զգենուին մաշկ վագեր եւ յս-  
վագու, ՚ի նշանակել անշուշտ զի արբեցութեամբ  
անբանից անասնոց հաւասարի մարդ . ընդ լերինս  
եւ ընդ ձորս ձայն բարձեալ վագէին, իբրեւ զերէ  
վայրիս, ունելով ՚ի բռին մական պաճուճեալ սա-  
ղարթուք բաղեղան :

ՏԱՂ. ԺԸ. <sup>(1)</sup> Մերկանայր երբեմն Սէր ՚ի զինուց  
եւ առնոյր զքնար . — Զերկոյուն տաղիցս արժան-  
եաց՝ կարի զանազան կարիք են բանասիրաց, ո-  
մանց ծայրայեղ դրուատեալ եւ այլոց նոյնչափ  
դարսիւեալ : Սյլ ասասցուք ասաէն զի բազում ու-  
րեք կրիտիսք՝ ոչ այլ առ ինչ անդոսնեն կամ ներ-  
բողեն՝ բայց զի նոր ինչ արասչեն : Եթէ դասե-  
նայն մարդ ՚ի ժամանակէն եւ ՚ի բարուց անձին եւ  
ազգին դատել արժան իցէ ոչինչ անվայել թուին  
Անակրէոնի տաղքդ :

ՏԱՂ. Ի. <sup>(1)</sup> Զնիովպէէ դստերէ Տանտալոսի՝ այս-  
պէս խօսի Խորենացի . (Բիլք Պիտ. յաղ. եղծ.

օրին. Ա.) Էր նա յոյժ սիրելի Լեւոնայ դիւր՝ մօրն  
 Ապուլլոնի . եւ զսոյն լեալ համբաւէ թաթաւուջ  
 համբաւօք , զուգաթիւս ինն վեց արուօք եւ նոյն-  
 չափ իդօք , եւ ապարասանեալ բաց յաղաղս բաղ-  
 մորդու թեանն , նախատէր զԼեւոնի : Ընդ որ բար-  
 կացեալ յոյժ աստուածուհին՝ առաքէր ասէ զԱպուլ-  
 լոն եւ զՍրաւեմիս դիւր որդիսն . եւ սատակեալ  
 քառնայր Ապուլլոնիւ զորդիսն , եւ Սրաւեմեաւ՝  
 զէզս . վասն զի պար ընձեռեալ էին , որպէս համ-  
 քաւ են , հասուցաւ եւ զյանկարծօրէն մահսն , եւ  
 զճէտլբէ զյանկարծադէպն եւ զժնդակն զբողմամբ  
 անդդայացեալ քարանալ , եւ զրեթէ արձան մին-  
 չեւ ցօյժմ եւս արտօսր թօրէ : Տես եւ յիլիականն  
 երդ 24 ՚ի բանս Արիլլէսի ընդ Պրիւմա :

(2) Տես Տաղ ժ. Բ. ծանօթ .

(3) Սանդալ ազգ ինչ կօչկաց : — Աքանչելի է  
 տաղս իմաստիցն գորովով : Բաւում նմանութիւնք  
 են սորա :

ՏԱՂ ԻԱ. (1) Կամի ասա քերթողս զինեսէր՝ զին-  
 եաւ գրոց սրտին շիջուցանել : — Փոխանակ ՚ի կիր  
 արկանելոյ գրառ ըմպել ասէ «ճե՛» որ է բնակել ՚ի  
 մի ումայ սոանց շնչառութեան : Այս ազգ ըմ-  
 պելոյ ոչ ինչ անձանօթ եւ ժամանակաւս փութա-  
 գոյն արբեցուցաւ է :

ՏԱՂ ԻԲ. (1) Զբառդ վորս՝ յաճախ է տեսանել  
 առ Յոյն եւ Լատին քերթողս՝ փոխան տերեւա-

հւոյ արկեալ 'ի կիր :

(2) Փոխանակ ասելոյ՝ թէ ձայն նորա համոզիչ է 'ի հանգիստ յորդորէ՝ այսպէս խօսի քերթողն, որ եւ կարի գովելի գտաւ յաչս բանասիրաց :

ՏԱՂ ԻԳ. (1) Զտաղս ասեն յօրինեալ Անակրէոնի յորժամ յետս դարձոյց առ Պոլիկրատ զգանձս ընկալեալս 'ի ն'անէ :

ՏԱՂ ԻԶ. (1) Երգքս այս բաժակաց (Տես 'ի վարս Անակ.) յօրինեալք են մեծաւ մասս իր 'ի խրախմբանս անդ, եւ երգէին 'ի Յունաստան մեծաւ զմայլմամբ, Այլ զեռանդն յայսպիսի իրս անհնար է եւ ջերմադոյն մտաց երեւակայել, արդ թէ այն որ հրաշանայ ընդ Անակրէոն չկարէ ընթանել զամենայն, քանիպատիկ եւս Քերականն՝ որ բառս եւ եթ նշմարէ 'ի նմին :

ՏԱՂ ԻԸ. (1) Անուանի էր Հոսդոս վասն զեղարուեանից :

(2) Մովսէսկարէին Յոյնք զաղղի աղղի պատկերս :

(3) Ծիրանի՝ փորձիրոն նշանակէ աստ գոյն ինչ մտոյգ :

(4) Այք Աթենասայ ծաւի էին. իսկ Աստղեան՝ թաց առ լիտութեան :

(5) Իցէ հնար լատոգոյն գովել զգեղ թնչաց :

(6) Շրթուք՝ գան թուին բառ նախնեաց հրապարանաց եւ ճարտարիտութեան :

ՏԱՂ ԻԹ. (1) Ի կրկին տաղս այսոսիկ տեսանի ճա-

շակ նախնեաց զգեղեցկութենէ:

(2) Որպէս խնդրեաց զի յաչս սիրուհւոյն դոյլի ինչ յԱթինասայ եւ յԱստղկանէ, նոյնպէս եւ վասն մանկանն սիրելւոյ հայցէ զձիրս Աստղկան եւ զԱրիսի:

(3) Գոյնդ այդ յայտ առնէ զանմեղութիւն:

(4) Լանջք Հերմեայ՝ որպէս 'ի ճահ է ճարտասանի. ազդերք Պոլիկոբայ՝ զի պիտանի են մասունքդ ախոյենի. փոր Բաքոսի՝ զի աստուածդ այդ մըշտառոյդ էր եւ միշտ գինելից:

(5) Ի Սամոս գոյր արձանն Ապոլլոնի:

ՏԱՂ Լ. (1) Ի փափկահիւս տաղիս՝ նշանակէ քերթողն թէ գեղ զօղեալ ընդ մտայ՝ գերի պահեն զՍէր:

ՏԱՂ ԼԱ. (1) Որչափ գողտր է առաջին տաղն, այնքան բուռն եւ եռանդուն այս:

(2) Որետ որդի Ագամեմնեայ, եւ Ալկմէոն՝ որդի Ամփիարայի, յետ սպանանելոյ զմարս իւրեանց՝ հալածական գնային 'ի ստուերաց նոցին:

(3) Ալկմէոն՝ 'ի սասափկ ջասման՝ սպան զմին 'ի բազում կանանց իւրոց:

(5) Կաս՝ վեհագոյնն 'ի դիւցադունս Հոմերի սկնի Աքիլեայ, զժկամակեալ ընդ որ չետուն նմա ըզդէնս Աքիլլի շողաւ զիւրովին: Անուանի է եօթընքեմիտեայ ասպար վիթիարի դիւցադինն:

ՏԱՂ ԼԲ. (1) Ոմանք 'ի բանասիրաց անարժան

վարկեալ զտաղս [Անակրէոնի՝ 'ի բաց թողին : —  
Բազում հետեւողութիւնք են այսր տաղի :

ՏԱՂ ԼԳ. <sup>(1)</sup> Տաղս այս վասն սրտառուչ եւ պարզ  
բնականութեանն ընդ դեղեցկազոյնս դասեալ է :

ՏԱՂ ԼԵ. <sup>(1)</sup> Եւրոպէ՛ դուստր Ազինորայ՝ արքա-  
յին Փիւնիկիոյ՝ առեւանդեցաւ յԱրամաղղայ որ 'ի  
ցուլ փոխեալ էր :

Սյնպէս անցեալ ընդ նեղուց Կոստանդնուպօլ-  
սի՝ ետ պատճառս անուան Վոսիորոս՝ որ է անցք  
արջառոյ . իսկ ասին յոր ել կոյսն յանուն նորա  
Եւրոպէ կոչեցաւ :

ՏԱՂ ԼԶ. <sup>(1)</sup> Մակդիրս այս յաճախեալ առ նախ-  
նիս ամենագեղ նշանակէ :

<sup>(2)</sup> Չքնաղ է պատկերդ պսակի սպիտակալեաց :

<sup>(3)</sup> Սիրէին նախնիք յամենայնի խառնել զգաղա-  
փարս տխուրս : Ոմանք անհարազատ համարեցան  
զտաղս՝ զի յիշատակի 'ի սմա հռետորութիւն՝ որ  
թէպէտ սկսեալ իմն էր յաւուրս քերթողիս՝ այլ  
'ի յաջորդ դարուն ծաղկեցաւ :

ՏԱՂ ԼԷ. <sup>(1)</sup> Պառնէս 'ի վարս Անակրէոնի ասէ (ա-  
ռանց պատճառս 'ի մէջ բերելոյ) թէ 'ի դառնալ  
մատենագրիս 'ի յԱթենայ 'ի Տէոս տեսեալ 'ի բար-  
ձուէ լերին միոյ զՆգեան ծով կղզեօք հանդերձ  
եւ դամենայն դեղ վայելչութեան առանձնութեան՝  
երգեալ իցէ զայս :

<sup>(2)</sup> Շնորհաց՝ որ մայր էին ամենայն դեղեցկու-

Թեանց՝ բղխումն ասէ լեալ զվարդ : Քանի՛ արնիւ  
են բացատրութիւնք տաղիս՝ մեղմանալ ալեացն  
փայլիլ վատակոց մահացուացն եւայլն :

ՏԱՂ ԼԸ. <sup>(1)</sup> Քանաստեղծս ակնարկէ աստ տօնից  
խշատակելոց յԵլիանոս : — Ի ձայն փողոց հրաւիր-  
եալ մրցողացն՝ պարտ էին ըմպել սրուակ մի լի  
գինով, որ փութադոյն ըմպէր զայն տանէր զյաղ-  
թութիւն, եւ տային նմա պսակ եւ սրուակ մի՛ ՚ի  
մրցանակ :

<sup>(2)</sup> Խառնէին նախնիք մեղր ընդ գինւոյ՝ ՚ի քաղց-  
րութիւն :

<sup>(3)</sup> Սիւենոս՝ այծամարդ ծերունի՝ սնուցիչ եւ ըն-  
կեր Բաքոսի, հեծեալ ՚ի վերայ իշոյ արար զարշա-  
ւանս Հնդկաց . ՚ի դարձին բնակեցաւ յԱրկադեայ՝  
որ արբենայր յաճախ :

ՏԱՂ Խ. <sup>(1)</sup> Ի տաղս ինչ նախնեաց դտանի նոյն ի-  
մաստ :

ՏԱՂ ԽԱ. <sup>(1)</sup> ԶԲաքոս սիրոյ ընկեր ասէ, զի ա-  
ռանց Բաքոսի եւ կերերի պաղ է սէր :

ՏԱՂ ԽԲ. <sup>(1)</sup> Սլաք սիրոյ : — Զեղանակս այս խօ-  
սից վարեն եւ սուրբ գիրք :

ՏԱՂ ԽԳ. <sup>(1)</sup> Յօղով եւ եթ սնանին ճպտունք . իբ-  
րեւ արքայ նուագես ասէ՝ այսինքն զարքայն ըը-  
նարի Ապոլլոն : Էզք ճպտանց համերք են, որոց  
վասն Գսենարկոս կատակերգակ երանելի կոչէ  
զաղգ նոցա :



(<sup>2</sup>) Ի մութս ամառան երգէ միջաան :

(<sup>3</sup>) Զգօն կոչէ զի միշտ զուարթ է, երկրածին՝  
զի Աթենացիք այսպէս կարծէին, որոյ վասն այր  
խորաքանչիւր կրէր զպատկեր նորա ասկեճոյլ 'ի  
խոյր իւր, անարիւն կոչէ զի նմանեցուցէ զայն  
գից : (ԵՂԻՇԷ)

ՏԱՂ ԽԵ. (<sup>1</sup>) Լեմնոս կղզի, յէղէական ծովու,  
աւր էր հնոց մի Հեփեսոսի :

(<sup>2</sup>) Քանի՛ զօրութիւն տայ Անակրէոն ալաքացե  
ախրոյ, զի Սրէս հուժկու եւ վիթխարի աստուածն  
պատերազմաց, հպեալ եւ եթ հեծեծէ առ ցաւոց :  
Իսկ Սէր՝ չառնու յետս զուաք, այլ թողու զայն զի  
յիշատակաւն մի եւս ժպլհեացի այդպիսոյ :

ՏԱՂ Ծ. (<sup>1</sup>) Երգս այս յայնցանէ է զոր յայգե-  
կութս նուազէին Յոյնք . — Զկարեմք՝ ասէ Թովմ,  
Մուր՝ չիմանալ զղացումն պատկառանաց ընդ նըշ-  
խարս կրօնից նախնեաց :

(<sup>2</sup>) Իմանայ նոր գինի . — զեղեցիկ գաղափար է  
Անակրէոնի աստուածացուցանելն զգինի :

ՏԱՂ ԾԱ. (<sup>1</sup>) Սքանչելի ներբողեան է վարդի բա-  
նահի սութիւնս այս եւ չիք ինչ առ նախնիս  
չքնադագոյն :

(<sup>2</sup>) Գրգել զվարդ ձեռք՝ նշմարէ քերթողն թէ  
վարդ նորածին սեղմեալ 'ի ձեռին բուրէ հասա ա-  
նոյշ, կամ որպէս համարի Տասիէ ակնարկէ սովա-  
րութեան ինչ Յունաց, օխահարք 'ի վարձել եթէ

չաջող իցէ նոցա բաղդ՝ ձեռն 'ի ձեռին վերայ  
եղեալ սրայթուցանէին զոերեւ ծաղկի իրիք . —  
զտանի տակաւին սովորութիւնս 'ի ճաղղիայ :

(3) Ի ցուցանել զյարդ վարդին՝ յիշէ քերթողն  
ղիարդ յամենայնի խառնեն զայն : — Եւ 'ի խօսս  
անգամ փոխանակ ասելոյ քաղցր բարբառիս, վարդս  
բարբառիս ասէին երբեմն :

(4) Ակնարկէ աստ որպէս մտանէ 'ի բաղադրու  
թիւն դեղոյ . նորին ծերութիւն՝ զի վարդ անոյշ  
հոտի եւ յետ թառամելոյ :


(5) Վասն ծննդեան Աստղեան տես վերադոյն 'ի  
դեղեցիկ տաղն Իթ .

(6) Պալլաս՝ զինուք զարդուք եւ յըղեղէն Արա-  
մազդայ . առասպելաւս յայտ արարեալ այսու թէ  
իմաստութիւն բղխեաց 'ի մտաց դերադունին 'ի  
դիս :

(7) Այսու քերթողն զից հաւասար իմն կացու-  
ցանէ զվարդ . զի մինչդեռ երկինք՝ զՊալլաս եւ Ով-  
կէան՝ զԱստղիկ, երկիր բղխէր զվարդ :

ՏԱՂ ԾԲ. ( ) Ոչ է պարտ՝ զԱիւպելս այս դաստ-  
ուածունին կիւպելէ համարիլ . զի տողքս ոչինչ  
այդպիսի յայտնեն . այլ պարտ մանաւանդ համա-  
րել զսա զմի ոք 'ի հոմանեաց Անակրէոնի :

ՏԱՂ ԾԳ. (1) Նշանս դնէին Հելլենք 'ի դաւակ ե-  
րխվարայ :




Տաղք որ զկնի՝ չեն ինչ ապացուցեալք Անակրէոնի սեպհականել : Թող զտողս տողս զոր մուծեալ է ոմանց ըստ քմացն յօժարութեան 'ի ժամանակս ժամանակս, ժպրհեցին եւ այլք տողս բառնալ յաւելուլ՝ անպատկառք մեծի անուան մատենագրին : Յայս սակս վէճք բազումք առ գիտնականս յուղեցան զթուոյ տաղից Անակրէոնի, եւ ըստ զանազան թարգմանչաց տարբերի թիւ նոցա : Այլ ես հետեւեցայ ականաւոր տպագրութեան Մոնֆալքոնի, միայն 'ի յաւելուածոյ տաղից նորս զոմանս 'ի բաց թողի՝ ոչ կարծելով զնոսա ծնունդս Անակրէոնեան հանճարոյն եւ զայնս եւ եթ առեալ քաղեցի յորս նշմարի Անակրէոն՝ եւ անդ իսկ բազում համարձակութեամբ վարեցայ :

**ՏԱՂ Գ.** Հարազատ ծնունդ թուի սա ինձ ծերութեան հեշտասէր քերթողի, զի թէպէտ տարբեր ոճով գրեալ՝ այլ ոչ նուազ նշմարի ողի նորին քերթող :

**ՏԱՂ Զ.** Թող զչնաշխարհիկ աշխոյժ, զխանութքերթողական որ փայլէ 'ի տաղիս՝ եւ բարոյականնե կարի գեղեցիկ է ամենուրեք անխտիր :

**ՏԱՂ Ը.** Տաղս պակասէ 'ի վերջ կոյս :

**ՏԱՂ Թ.** Պատրեալ ոմանց յԱնակրէոնեան շրնորհաց որ դարանան 'ի գեղեցիկ տաղիս՝ նորին քերթողի ընծայեն : այսպիսի խոշոր վրիպակի օժանդակ առեալ զսխալ վերձանութիւն ձեռագրի



իրիք : Այլ է դա տղերձեալ մանաւանդ առ Սրահ-  
 րէոն՝ զոր մեք ՚ի վերջ ասա կարդեալ՝ կնքել կա-  
 մեցաք դասդսն՝ որպէս յայլ տախտակաթիւնս ինչ  
 է տեսանել, ներքաղենիս. նորին սիրելի Յերթողի :

ՉԵՐԻ



